

ԱԶԳԱՅԻՆ ԶՈՋՆԵՐ. — Յ. Յ. Պարոնեան, Գ. տպագրութիւն Թիֆլիս, 1896. — Հրատ. Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութեան. — Գինն է 1 րուբլի.

Մի գիրք, որ յիրաւի ոչ երրորդ անգամ միայն այլ և շատ անգամներ ցանկալի էր հրատարակած տեսնել, Ազգային Զոջները մեր գրականութեան այն սակաւաթիւ արդիւնքներից է, որոնք դեռ երկար ժամանակ չեն հնանայ. կգայ այն մի օր, երբ նա այլևս իրրև գրականական գործ շատ չի կարգացողի, բայց այն ժամանակ ևս կպահէ իւր նշանակութիւնը իրրև մի պատմական կարևոր վաւերագիր: Պարելի է համարձակ ասել, որ ոչ մի գրուածք մեր ժամանակակից ազգային կեանքի մասին այնպիսի պարզ և ճշգրիտ գաղափար չէ տալիս, որպիսին մի յայտնի շրջանի վերաբերմամբ Զոջերի մէջ ենք գտնում. Ըստ երևութին այդ գիրքը պարսպ ժամերին ծառայելու և ծիծաղ յառաջ բերելու համար է աշխարհ եկել. բայց կգգուարանայինք զնել նորամտ մի ուրիշը մեր նոր գրականութիւնից, որ հաւասարուէր նորան իւր ներքին բարոյական լքջութեամբ: Ինքը հեղինակը լաւ ճանաչելով ընթերցող հասարակութեան թոյլ կողմերը՝ Յառաջաբանի մէջ հրաւիրում է շխարուել արտաքինով, այլ իւր ընծայած պատկերների վերայ իրրև իսկական կենսագրութիւնների վերայ նայել: Եւ նա տալիս է կենսագրութիւններ՝ բառի ընդարձակ նշանակութեամբ. այն, որն արտայայտելու համար ուրիշը թերթեր ու հատորներ պէտք է գործ գնէր՝ Պարոնեանի հոգետես աչքն ու սուր գրիչը մի կամ մի քանի գծերով են արտայայտում. և այդ գծերն անջնջելի են մնում ընթերցողի յիշողութեան մէջ, Երանի՛ նոյնպիսի խոր տպաւորութիւն թողնէր ամենի վերայ նաև այն մաքուր զգացումը, որով ողևորուած է հեղինակի գրիչը, Պարելի է նա շատ դէպքում սխալուել է, կարելի է լաւ չէ ըմբռնել իւր ընտրած անձի բնաւորութեան այս կամ այն կողմը, բայց մեր տպաւորութիւնն այն է, որ նա ներկայացրել է ամէն ինչ իրօք այնպէս, ինչպէս ինքը տեսել է՝ առանց աշտուութեան, առանց անաղնիւ միտումների, Այդ բարոյական ճշգութեան մէջ է նորա նկարագրութեանց բուն արժէքը, նկարագրուած անձերի մեծագոյն մասը մեզ անծանօթ է. մենք նոցա վերայ միայն իրրև տիպերի, իրրև որոշ հասարակական կեանքի ներկայացուցիչների վերայ ենք նայում, և իրրև տիպեր նոքա անման են. — ներկայ հրատարակութեան մէջ՝ Հրատ. Ընկերութեան արած Բ. տպագրութեան բաղադատմամբ, աւելի է հեղինակի պատկերը և Գրիգոր Արծրունու կենսագրութիւնը. բայց այս մասին (և առհասարակ)

հրատարակիչներն աւելորդ են համարել ծանօթութիւն զնել, եթէ կազմի վրայի (հեղինակի պատկերով) մակագրութիւնը չհաշուենք.

ՆԵՐՔԻՆԱՊԵՏ ԱՍԼԱՆԸ. — Յ. Բարսեանեան, Թիֆլիս 1896.

Մի ըստ ամենայնի անպէտք գրուածք:

ՓՈՒՔՐԻԿ ԶՐՈՅՑՆԵՐ. — Կազմեց Գ. Բարուրեանց, Թիֆլիս, 1896. Գինն է 10 կ.

Մի փոքրիկ ժողովածու, որի մէջ պէտքական նիւթերի հետ անպէտքներն էլ կան, առհասարակ խեղճ թարգմանական լեզուով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Բ Ա Յ Ո Ւ Ա Ծ Է
Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Գ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
„ԱՐԱՐԱՏ“

ԱՄՍԱԳՐԻ ԱՌԱՋԻՄԱՅ 1897 ՏԱՐՈՒԱՅ.

Բաժանորդագրինն է
Ռուսաստանում 4 ր.
Արտասահմանում 5 ր.

Առաջիկայ 1897 թուականից կհրատարակուի նոր-նյախիջևանում
„ԳՈՐԾ“

Գրական եւ պատմական վեցամսեայ հանդէս: Երկու զրքի թաժանորդագինն է Ռուսաստանում 3 րուբլի, արտասահմանի համար 10 ֆրանկ: Խրաքանչիւր գիրքը ստանձին կարժենայ 2 րուբլի: Բաժանորդագրութեան համար պէտք է դիմել՝ Нахичевань на Дону, въ редакцію сборника „ГОРЦЬ“. Իսկ արտասահմանից—Nakhitgevan sur le Don, Rédaction de la Revue „GORZ“.

Խմբագիր—հրատարակիչ
ԵՐՈՒԱՆԻ ՀԱԼԱԶԵԻՁ.